ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-ը փետրվարի 2015 թվականի թիվ 11 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ և 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի ''Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրի կազմման, այդ համակարգով փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին'' թիվ 1510-Ն որոշումը՝

ո ր ո շ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին պարգևատրել 2014 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականի արդյունքներով, մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի ''Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում'' հոդվածով նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն կից հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանին՝ ապահովել որոշման կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015 թ. փետրվար 02
Ք. Իջևան